

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-1-1-Ա

ք. Երևան

10.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հունվարի 10-ի նիստում քննարկեց 2021 թվականի նոյեմբերի 17-ին արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «Գրանդ Քենդի» ՍՊԸ ընկերության (0061, ք. Երևան, Մասիսի 31, AM) «JOYCO» (No20201860) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
Հայտում նշված՝ 30-րդ դասի բոլոր ապրանքների համար բացի «շոկոլադ. կակաոյով և կաթով ըմպելիքներ. սուրճով և կաթով ըմպելիքներ. շոկոլադակաթնային ըմպելիքներ. շոկոլադի հիմքով ըմպելիքներ. շոկոլադային մուսեր. շոկոլադե զարդարանքներ տորթերի համար. շոկոլադապատ ընկույզներ. հացին քսվող սնունդ շոկոլադի հիմքով. հացին քսվող սնունդ ընկույզ պարունակող շոկոլադի հիմքով. կաթնային կոնֆիտյուր. շոկոլադով հաց (շոկոլատին)» հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում կաթի շի և շոկոլադի պատկերը ներառող նիշը չի կարող գրանցվել 30-րդ դասի մնացած բոլոր ապրանքների համար, քանի որ սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի և տեսակի վերաբերյալ հարցերում: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված գրության մեջ առկա այն դիտարկմանը, որ «ընկերության համար Joyco «ընտանիքի» ապրանքային նշանները և հատկապես Պանդայով

մակնշվածները դարձել են որպես առևտրային կերպար, որով և լայն տարածում են գտել հանրության շրջանում», ապա ցանկանում ենք նշել այն փաստը, որ պետական լիազոր մարմինը կայացրել է ապրանքային նշանը գրանցելու մասին որոշում ճիշտ այն ապրանքների համար, որոնց համար այդ ապրանքային նշանի ներքո դրանք օգտագործվում, վաճառվում և լայն տարածում են գտել հանրության շրջանում:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Հետագա քննարկման ընթացքում բողոքարկման խորհուրդը եկավ այն եզրակացության, որ ներկայացված ապրանքային նշանը կարելի է գրանցել հայտում նշված որոշ ապրանքների համար ևս, որոնք չեն հակասում օրենքի պահանջներին:

Արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանը համաձայն էր բողոքարկման խորհրդի դիրքորոշման հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես չառարկեց:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված «JOYCO» (No20201860) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակիորեն բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը մասնակիորեն չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել հետևյալ ապրանքների համար՝ դաս 30. հրուշակեղեն Նոր տարվա տոնածառերը զարդարելու համար. կոնֆետներ. հրուշակեղեն քաղցր խմորից, առավելապես խորիզով. կարամելներ (կոնֆետներ).

շոկոլադ. պոմադկաներ (հրուշակեղեն). կակաոյով և կաթով ըմպելիքներ. սուրճով և կաթով ըմպելիքներ. շոկոլադակաթնային ըմպելիքներ. պաստեղներ (հրուշակեղեն). մատուտակի կոնֆետներ (հրուշակեղեն). հրուշակեղեն նշի հիմքով. հրուշակեղեն գետնընկույզի հիմքով. մատուտակի ձողիկներ (հրուշակեղեն). շոկոլադի հիմքով ըմպելիքներ. շոկոլադային մուսեր. աղանդերային մուսեր (հրուշակեղեն). շոկոլադե զարդարանքներ տորթերի համար. շոկոլադապատ ընկույզներ. հացին քսվող սնունդ շոկոլադի հիմքով. հացին քսվող սնունդ ընկույզ պարունակող շոկոլադի հիմքով. շոկոլադով հաց (շոկոլատին). թխվածքաբլիթ. վաֆլիներ. ծամոն (մաստակ). շաքարով հրուշակեղեն. քաղցրաբլիթներ. չոր թխվածքաբլիթ. պրալինե. մրգային դոնդոլ (հրուշակային). քաղցրավենիքից պատրաստված զարդարանքներ տորթերի համար. նուգա:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ